

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վիեննա, 29 Օգոստոս 1901:

Գերմանիոյ հորիզոնին վրայ քանի մ'ամսէ ի վեր սգոյ սեւաթուր ամպեր կարծես զիրար կը մղեն... Հազիւ անցեալ ամիս հոկտեմբեր իշխանը թաղած եւ կոմս Վալդեմարի փառաւոր ընդունելութեան կը պատրաստուէր Գերմանիայ, դժբախտ արկած մը դարձեալ ըզմանդակ պետութիւնն ի սուգ համակեց: Հանգուցեալ Փրիդրիխ Գ. ի տասուիքնք տարիէ ի վեր այրիացած ամուսինը — Փրիդրիխ կայսրուհին իւր անցաւորը կնքեց ամուսն 5ին:

Հանգուցեալ Մեծին Բրիտանիոյ Վիկտորիա թագուհւոյն երէց դուստրն էր՝ 1840 յոյ. 21ին ծնած: 1856ին կ'ամուսնանայ Պրուսիոյ Փրիդրիխ Վիլհելմ թագաժառանգին հետ. 1888 Մարտ 9ին իւր մահացու հիւանդ ամուսինը կը զանակալէ Փրիդրիխ Գ. անուամբ, եւ նոյն տարւոյն Յուն. 15ին վաղահաս մահն անոր կենաց թելերը կտրելով, զինքն իւր ամուսնէն կ'անջատէ: —

Վալդեմարի եւ իւր յաղթական քանակին ընդունելութեան համար տեւումած պատրաստութիւնները կայսրուհւոյն մահուամբ խափանուեցան:

Անգլիա-Տրանսիլա: Լոյդ Գիլքրէյի ընդդէմ ազգաց իրաւանց եւ հաւաքի խաղաղութեան դաշնամուրդովն Բոքսթըմ ղէմ հանած յայտարարութիւնը (proclamation) — որուն համաձայն մինչեւ Սեպտ. 15 անձնատուր չեղող Բոքսթըմ պիտի աքսորուին, եւրոպական լրագրոց՝ շատ ընդդիմախօսութեանց նիւթ տուաւ: Բոքսթըմ հրամանատարներն այս անագորոյն յայտարարութեան ղէմ քնական է բողոքեցին եւ — աներկիւղ ազատադէմ մինչեւ ցլնտին փաթիլ արեւան պատերազմ հրատարակեցին ընդդէմ ընչաքաղց Անգլիացոց: Այդիոն generalissimo ծնող առստ ամէն խիստ միջոցներն անագոյն եղան ցարդ Կապիւսի զէն ի ծոփն կոռուող հռչակագրի մէջ զսպելու: — Բոքսթըմ անգլիացի զերեւելները վեհաժողովեալ կ'արձակէին. իսկ հիմա Գիլքրէյի վերոյիշեալ յայտարարութեան ան ընդ ական եւ ատամն ընդ ատամն փոխարինելով, զանոնք այլ եւս չեն արձակէր: — Կապիւսաւտե եկած վերջի լուրերու համաձայն Բոքսթըմ „Steinackers Horse“ գնդին պատկանող Բալդէ տեղակալ հասարակ զինուորի մը հետ հրացանահար կ'ընեն, վասն զի տոյն գնդին հրամանատարը Բոքսթըմ հրեշտակ — Շոյքը, իւր լրտես գլխատել տուած էր:

Վենեցոսեւա Ն. Կոյուսիս: Հայաստանի Ամերիկայի այս երկու հասարակապետութիւնք քանի մ'ամսէ ի վեր ընչաքաղց ու խաղաղամբոյ կուսակցապետներու ծնողը Հերայի խնձոր են դարձած: Անցեալ ամսոյն վերջերը լուր եկաւ թէ, Կոյուսիսի Կարթիսա զորավարը 5000 զօրքով Վենեցոսեւայի սահմանները կոխած եւ Կապիւսի զանեղքը պաշտօնանկ ընելու դիտմամբ, ընդհ. յեղափոխութիւն կ'ուզէ յարուցանել: Առաջիկայ ամսոյն մէջ հասած լուրերն իրարու հակասական կը հնչեն, որով մինչեւ այսօր կարելի չեղաւ դիպաց փոյս ստոյգ գաղափար մ'ունենալ: Կապիւսի զանեղքը կ'ապահովցնէ թէ, Կարթիսա զօրավարը կառավարութեան գնդերէն զարնուելով՝ յետս նահանջելու տրիպուտ է: Ասոր հակառակ ուրիշ աղբիւրէ մը կը տեղեկանանք թէ, Սաւ Բրիտանիայի ըզմ ունեցած ընդհարման մէջ, կառավարութեան զօրքը՝ յեղափոխականներէ պարտուելով, յեղափոխութիւնն արագ արագ երկրին ներսերը կը տարածուի: Ամսոյն 12ին հասած հեռագիր մը կ'ըսէ. Պանամայի ու Կոլոնի մէջ կառավարութեան զօրքն ապստամբներու ղէմ արիւնահեղ ճակատ մը տուաւ. երկու կողման ալ կրուստը մնծ էր, սակայն վերջնական յաղթութիւնը յեղափոխականներու մնաց: — Միացեալ Նահանգաց մարտանաւերն արդէն Պանամայի ու Կոլոնի ջրերու վրայ խարիվս նետած են: Ո՛վ զիտէ թէ երկու դրացի ազգաց կազ ու կուռն այս անգամ ալ օտգտուելով, Փիլիպինաց ազատիչը (՝) Պանամայի վրայ եւս իւր դրօշը պիտի չփայացնէ...

